

## ՀԱԼԵՊԻ ԶԱՐԵՆ ԵՓՓԵ ՃԵՄԱՐԱՆԸ

### Ն. 4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Աշխարհի տարբեր ծայրերում ստեղծված հայկական գաղթօջախների պատմության ուսումնասիրությանը զբաղվել են բազմաթիվ հայրենական և սփյուռքի պատմաբաններ, որոնք կատարել են մեծ հետազոտական աշխատանքներ՝ վեր հանելով և ըստ արժանվույն գնահատելով սփյուռքի մեր հայրենակիցների դաժան ու ողբերգական, բայց և միաժամանակ հերոսական պատմությունը՝ մաքառումներով, տառապանքներով, արարումներով ու ապագայի հանդեպ անկոտրում հույսով ու հավատով շաղախված:

Եվ եթե հայկական տարբեր գաղթօջախների ընդհանուր պատմությունը քիչ թե շատ ուսումնասիրվել է, ապա սփյուռքում գործող հայկական կրթօջախների պատմությունը կարոտ է լուրջ հետազոտության:

Սույն հոդվածի նպատակն է հանգամանորեն ներկայացնել և ըստ արժանվույն գնահատել ազգապահպանության և հայ երեխաների հայեցի կրթության ու դաստիարակության գործում սիրիահայ գաղութի պատմության մեջ մեծ դեր ունեցող Հալեպի Քարեն Եփփե ճեմարանը:

Ինչպես բոլոր հայկական գաղութներում, այնպես էլ Սիրիայում հայերի համար ամենատաջնային գործը հայկական եկեղեցու կառուցումն է եղել՝ որպես քրիստոնեական հավատքին ամուր կանգնած լինելու առհավատչյա և որպես հայապահպանության կարևորագույն գործոններից մեկը:

Եկեղեցաշինությանն անմիջապես հաջորդել է դպրոցաշինությունը. եկեղեցիներին կից բացվել են հայկական դպրոցներ՝ որպես մեր մայրենի լեզվի պահպանման, մատաղ սերնդի հայեցի կրթության ու դաստիարակության, նրանց մեջ ազգային ինքնագիտակցության բարձր ոգի սերմանելու, գիտության լույսը հարատև պահելու և հայապահպանության գրավական:

Սիրիայի տարբեր քաղաքներում մեկը մյուսի հետևից բացվում են նախակրթարաններ՝ 1-6-րդ դասարաններով: Նրանց մասին սփյուռքահայ մտավորական Հակոբ Չոլաքյանը գրում է. «Սուրիական հողին վրա հարիւրավոր հայ դպրոցներու՝ ծաղկոցներու, միջին ու բարձր նախակրթարաններու հաստատումը մեր ժողովրդի հրաշալի յարութիւնն էր իր իսկ նահատակութեան քեմ հանդիսացած այս հողերուն վրայ»<sup>1</sup>:

Նախակրթարանների բացումից հետո, բնականաբար, կարիք է զգացվում նաև միջնակարգ և երկրորդական վարժարանների, որտեղ «հայ մարդու տիպարը կը կերտուի, ուր հայ տղան ու աղջիկը կը հակին՝ հայ լեզուի գանձարաններուն ու հայոց պատմութեան լուսադրուագ էջերուն վրայ, անոնցմէ առնելով, իրենց վաղուայ դիմագծութիւնը, հոգին, նկարագիրը»<sup>2</sup>:

Սիրիայի հայկական դպրոցների շատ քիչ շրջանավարտներ են կարողանում իրենց ուսումը շարունակել Բեյրութի Նշան Փալանջյան ճեմարանում, Անթիլիասի և Երուսաղեմի դպրեվանքերում և Կիպրոսի Մելքոնյան վարժարանում: Այս փաստն էլ պատճառ է հանդիսանում խորհելու Հալեպում ազգային ճեմարան բացելու հարցի շուրջ:

Մեծ նպատակասլացությունը, հարցի լրջության գիտակցումը, համառ ջանքերն ու տքնաջան աշխատանքները տվեցին իրենց պտուղները: 1947 թ.-ի հոկտեմբերին հա-

<sup>1</sup> Թակոբ Չոլաքեան, Յիսնամեակ Քարեն Եփփե ազգային ճեմարանի, Հալեպ, 1997, էջ 19:

<sup>2</sup> Նույն տեղում:

լեպահայությունը մեծ բախտավորություն ունեցավ ականատես լինելու Քարեն Եփ-  
փե ճեմարանի՝ ազգային ոգին մարմնավորող կրթամշակութային միջնաբերդի բաց-  
մանը:

Սիրիահայության կյանքի մեջ ընդհանրապես և կրթության ասպարեզում մասնա-  
վորապես իր խիստ հատկանշական, ծանրակշիռ ու կարևոր դերն է ունեցել և այժմ էլ  
ունի Քարեն Եփփե ճեմարանը, որը Հալեպի Նոր գյուղ թաղամասում 1947 թ.-ից ի վեր  
իր դռներն է բացել հալեպահայ աշակերտության և բովանդակ Սիրիայի հայ նոր սերն-  
դի առջև:

Իսկ ո՞վ է Քարեն Եփփեն, որի անունն է կրում ազգային երկրորդական վարժա-  
րանը՝ հայկականության օրրանը:

1895 թ. Համիդյան ջարդերի և 1915-18 թթ. եղերական ռճրագործությունների ան-  
մեղ զոհ դարձած միլիոնավոր հայերի նահատակությանն ականատես և միաժամանակ  
հայ հերոսամարտերի անմիջական վկա, մարդկային բարձր արժանիքների տեր դա-  
նիացի մի ազնվափայլ օրիորդ էր Քարեն Եփփեն, որն իր ամբողջ գիտակցական  
կյանքն անմնացորդ նվիրեց հայ ժողովրդին՝ նրա ֆիզիկական, հոգևոր - բարոյական  
վերականգմանը:

Նա բողոքի իր ձայնն էր բարձրացնում հայ ժողովրդի նկատմամբ կատարվող ե-  
ղերական ռճրագործությունների դեմ ոչ միայն իր հայրենիքում՝ Դանիայում, այլև տար-  
բեր երկրներում՝ ընդհուպ մինչև Ազգերի Լիգա: Նա միաժամանակ օգնության կոչ էր  
անում աշխարհի ժողովուրդներին՝ կործանումից փրկելու թուրքական յաթաղանից մա-  
զապուրծ եղած հայ տարագիրներին, որոնք իրենց հանգրվանն էին գտել աշխարհի  
տարբեր երկրներում և մասնավորապես հարևան Սիրիայում և Լիբանանում:

Ազգերի Լիգան Քարեն Եփփեին ընտրում է իր ներկայացուցիչը Հալեպում՝ գաղ-  
թական հայերի ապաստանի ու խնամքի հարցերով զբաղվելու համար:

Քարեն Եփփեն շրջում էր ամբողջ Սիրիայով՝ գյուղ առ գյուղ հայ որբերի ու անօգ-  
նական այրի կանանց փնտրելու ու հավաքելու նպատակով:

Նրա գթառատ ու հայապաշտպան գործունեությանն աջակցում էր նաև Դանիա-  
յում ստեղծված «Հայ բարեկամների դանիական ընկերությունը»:

Մինչև իր կյանքի վերջը (1934 թ.) դանիացի մեծ մարդասերը, հայության մեծա-  
գույն բարեկամը մնում է Հալեպում՝ իր կյանքն անձնուրաց կերպով նվիրաբերելով հայ  
ժողովրդի զավակներին, կիսելով նրանց վշտերն ու տառապանքները, բայց և միաժա-  
մանակ հիանալով նրանց ոգու արիությանը ու կորովով, անկոտրում կամքով, մեծ հա-  
վատով ու լավատեսությամբ:

Քարեն Եփփեի պայծառ հիշատակը հայության մեջ հավերժացնելու մի գեղեցիկ  
ու բարձր գնահատանքի արժանի քայլ էր Հալեպի ազգային ճեմարանը նրա անունով  
կոչելը՝ սերունդներին փոխանցելով նրա պայծառ կերպարի պատմությունը:

Ճեմարանի բացման արարողությանն արտասանած իր ճառում Առաջնորդ Զա-  
րեն Սրբազանն ասել է. «Այսօր Հալեպի մէջ շատ կան երկրորդական վարժարաններ,  
անգլիական, ամերիկեան եւ ֆրանսական կրթարաններ, սակայն անոնք չեն պատրաս-  
տեր ճշմարիտ եւ գիտակից հայ հանրային մարդը, որուն այնքան պէտք ունի այսօր  
գաղթահայութիւնը, ազգային իր գոյութիւնը անաղարտ ու ապահով պահելու համար  
հազար ու մէկ յորձանքներու, փոթորիկներու դէմ: Հայ ծնողներու վրայ կը ծանրանայ  
պարտականութիւնը գիտակցելու այն անփոխարինելի դերին, զոր կոչուած է կատարե-  
լու Հայ երկրորդական վարժարան մը, վաղուան հայ մայրերն ու հայրերը պատրաստե-  
լու համար»<sup>3</sup>:

Ճեմարանի բացման լուրը լայն արձագանք գտավ նաև հայկական մյուս գաղթօ-  
ջախներում, որտեղ սրտի թրթիռով, մեծ հպարտությամբ ու սիրյուղքով հայի ապագա-  
յի նկատմամբ չխամրող լավատեսության զգացումով ընդունեցին հալեպահայության  
այս մեծ հաջողությունը:

Բոստոնի «Հայրենիք» օրաթերթի հունվարյան համարի խմբագրականում ասվում  
է. «Հայաստանի մէջ ապրող հայուն համար նախակրթարանի մը տուած կրթութիւնն

<sup>3</sup> «Արևելք» օրաթերթ, հոկտեմբեր 26, 1947 թ., Հալեպ:

իսկ բաւական է, որ ան հայ մնայ եւ հայ մեռնի: Արտասահմանի մէջ սակայն Հայը, որ շարունակ ստույգ վտանգներով է շրջապատուում, որպէս զի հայ մնայ, չկորսուի, պէտք է ստանայ հայկական երկրորդական վարժարանի մը կրթութիւնը: Նման վարժարաններն են, որ անհատին մէջ ցեղի կնիքը կը դնեն եւ զայն ամբօրէն կը կապեն իր սեփական ժողովուրդին: Այս տեսակէտէն Պելրուի գնեմարանը հրաշքներ գործեց մեր մէջ. անիկա հասցուց հայ մտաւորականներու շեղեցիկ սերունդ մը, որ այսօր հայապահպանման գործին է նուիրուած: Նոյն դերը պիտի կատարէ Հալէպի գնեմարանը եւ Սուրիոյ հայութեան մէջ, որը կրթաւեր եւ ուսումնասէր է:

Մեր գաղութահայ տխուր կեանքին մէջ Հալէպի Քարէն Եփփէ Գոլէճը միաթառական երեւոյթ մըն է<sup>4</sup>:

### **Քարէն Եփփէ գնեմարանն այսօր**

«Քարէն Եփփէ գնեմարանը սոսկ դպրոց մը եղած չէ մեզի համար, այլ ազգակերտումի ու հայակերտումի յորդահոս աղբիւր, ուրկէ հոսած է միայն ու միայն հայութիւն, վաւերական հայութիւն, ամբողջական հայութիւն»<sup>5</sup>, - ասում է գնեմարանի տնօրէն Վարդգէս Նալբանդյանը:

Քարէն Եփփէ ազգային գնեմարանը Սիրիայի պետական կրթական համակարգի կառույցի մէջ է: Ունի պետականորէն սահմանված կրթական երկու աստիճան՝ միջնակարգ- բոլովն (7-9 -րդ դասարաններ) և երկրորդական բաքալորիա (10-12-րդ դասարաններ): Բաքալորիան ունի գիտական և գրական ճյուղեր:

Ազգային վարժարանն իր հիմնադրութեան օրվանից առայսօր վայելում է ազգային իշխանությունների մեծ օժանդակությունն ու հոգատարությունը:

Գնեմարանի աշակերտության թիվն այսօր հասել է 1000-ի: Սովորողների գերակշիռ մասը Հալէպի ազգային նախակրթարանների շրջանավարտներն են: Գնեմարանում սովորում են 13-ից 18 տարեկան հայ երեխաներ: 7-ից-12-րդ դասարանների բոլոր աշակերտներն ամբողջ Սիրիայում գործող պատանեկան աշակերտական կազմակերպության անդամ են և կրում են զինվորական համազգեստ:

Առարկայական-մեթոդական հանձնախմբեր դպրոցում չեն գործում: Կրթական, մեթոդական, կարգապահական բոլոր հարցերը քննարկվում ու լուծվում են գնեմարանի ուսուցչական ժողովում՝ տնօրէնի ղեկավարությամբ: Իսկ դպրոցի տնտեսական, ուսումնադաստիարակչական բոլոր խնդիրների լուծման պարտականությունն իր վրա է վերցրել գնեմարանի խնամակալությունը, որը խորհրդակցաբար համագործակցում է Սուրիոյ Բերիոյ թեմի ուսումնական խորհրդի հետ: Գնեմարանի խնամակալության անդամներն ընտրվում են ազգային իշխանությունների կողմից: Նրանք գաղութում ճանաչված մտավորականներ են, տարբեր մասնագիտությունների տեղ ազգանվեր գործիչներ, գործարարներ և բարեգործներ, որոնք կամավոր հանձն են առնում ազգային գնեմարանի անխափան գործունեության և զարգացման գործի կազմակերպումը:

Խնամակալությունը հոգում է վարժարանի նյութական բոլոր կարիքները, շինարարական և վերանորոգման աշխատանքները, գույքային հարցերը, միևնույն ժամանակ հսկում է դպրոցում իրականացվող ուսումնադաստիարակչական գործընթացը՝ հիմնվելով տնօրէնի պարբերական զեկույցների վրա:

Գնեմարանի տնօրէնին նշանակում է Սուրիոյ Բերիոյ թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը՝ խորհրդակցելով ազգային իշխանությունների հետ:

Նկատի ունենալով գնեմարանի ունեցած մեծ դերը սիրիահայ գաղութի կրթամշակութային կյանքում և հայապահպանության գործում՝ վարժարանի բոլոր տնօրէնները եղել են ազգի նվիրյալներ, կրթական մշակներ և ուժեղ անհատականություններ, որոնք բոլորն էլ իրենց անգնահատելի ներդրումն են ունեցել գնեմարանի մեծ առաքելական ու ազգանվեր ընթացքի ու զարգացման գործում:

<sup>4</sup> «Հայրենիք» օրաթերթ, 8 Յունուար, 1948 թ., Պոստոն:

<sup>5</sup> Յակոբ Չոլաքեան, Աշվ. աշխ., էջ 14:

Ինչպես ազգային բոլոր նախակրթարաններում, այնպես էլ Քարեն Եփփե ազգային ճեմարանում գործում են երկու տնօրեններ՝ արաբ տնօրենը՝ պետության կողմից նշանակված ներկայացուցիչը, և հայ տնօրենը՝ սեփականատիրոջ ներկայացուցիչը (սեփականատերը Սրբազան Առաջնորդ Հայրն է):

### **Կրթության բովանդակությունը**

Ճեմարանում ուսուցումն իրականացվում է արաբական պետական ծրագրով՝ արաբական բակալորիա, ըստ որի դպրոցում ուսուցանվող բոլոր առարկաները (7-12-րդ դասարաններում) դասավանդվում են արաբերենով: 9-րդ և 12-րդ դասարաններում հանձնում են պետական քննություններ՝ կենտրոնացված համակարգով: Կրթության բովանդակության մեջ օտար լեզուներից ընդգրկված են ֆրանսերենն ու անգլերենը և ուսուցանվում են ըստ ընտրության: Հայագիտական առարկաներից թույլատրվում է դասավանդել կրոն՝ շաբաթը երկու ժամ և հայերեն՝ որպես ծիսական լեզու, չորս ժամ: Կրոնի ժամերին որոշ չափով ուսուցանվում են հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն և մատենագրություն:

9-րդ և 12-րդ դասարաններում կրոնը դասավանդվում է արաբերեն՝ պետականորեն կազմած ծրագրով, և տարեվերջին հանձնվում է պետական քննություն:

Հայոց լեզուն չի ընդգրկված պետական քննությունների ցանկում: Ճեմարանը հայերենի առաջադիմության առանձին վկայական է տալիս:

### **Ուսուցչական կազմը**

Ի տարբերություն ազգային նախակրթարանների ուսուցչական կազմի, որը գրեթե 90% -ով հայ ուսուցիչներից է կազմված, ճեմարանի պարագայում նույնը չենք կարող ասել: Միջնակարգում՝ 7-9-րդ դասարանների ուսուցիչների 60% -ը հայ է, 40 % -ը՝ արաբ, իսկ երկրորդականում՝ (10-12-րդ դասարաններ) 40% -ը հայ է, իսկ 60% -ը՝ արաբ:

Ուսուցչական կազմի այս պատկերը պայմանավորված է մի քանի պատճառներով.

1. Ըստ արաբական բակալորիայի ծրագրի՝ ճեմարանում դասավանդվող բոլոր առարկաները պետք է ուսուցանվեն արաբերեն, ուստի պահանջվում է արաբերենի կատարյալ իմացություն, իսկ հայ ուսուցիչների շարքում դրանք այնքան էլ շատ չեն:

2. Ճեմարանում աշխատելու համար հիմնական նախապայման է համալսարանական կրթությունը (բոլոր առարկաների համար), որը նույնպես մեծ տոկոս չի կազմում հայ ուսուցիչների շրջանում:

3. Կարևոր նախապայման է նաև տվյալ առարկայի գծով մանկավարժական որոշակի փորձառություն ունենալը:

Այս երեք պայմանների բացակայությունն էլ պատճառ է դառնում ճեմարանում հայ ուսուցիչների թվի պակասի, որը, բնականաբար, անհրաժեշտ է լրացնել օտարազգի այն ուսուցիչներով, որոնց տվյալները բավարարում են վերոհիշյալ նախապայմաններից:

Ուսուցչական կազմի ընտրությունը կատարում է հայ տնօրենը՝ խորհրդակցելով ճեմարանի խնամակալական կազմի հետ: Ուսուցիչներ ընտրելիս, բացի վերոնշյալ չափանիշներից, հաշվի է առնվում նաև գաղութում տվյալ անձի ճանաչված լինելը, նրա քերած վաստակն ու ներդրումը գաղութի ազգային, կրթամշակութային կյանքում:

Քարեն Եփփե ճեմարանի ուսուցիչներից մի քանիսը իրենց բարձրագույն կրթությունը ստացել են Հայրենիքի բարձրագույն ուսումնական հաստատություններում, մասնավորապես Երևանի պետական համալսարանում (բանասիրության և պատմության ֆակուլտետներում) և Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում:

Ուսուցիչներից շատերը վերապատրաստման դասընթացներ են անցել Հայաստանում՝ ստանալով ոչ միայն հոգեբանամանկավարժական և մեթոդական պատրաստություն, այլև հայրենասիրական շունչ ու ոգի:

## **Դասագրքեր**

Ընմարանում հայոց լեզվի և գրականության դասագրքերի հարցը դեռևս չլուծված խնդիրներից է: Եղած դասագրքերը լիովին չեն համապատասխանում դասագրքաւտեղծման չափորոշիչներին և լուրջ վերանայման կարիք ունեն ինչպես կառուցվածքային ու բովանդակային, այնպես էլ մեթոդական և հոգեբանամանկավարժական տեսակետներից: Մասնավորապես շեշտը պետք է դնել դիդակտիկական այնպիսի կարևոր սկզբունքների վրա, ինչպիսիք են գիտակցականության, մատչելիության, ներառարկայական և միջառարկայական կապի, տեսության և պրակտիկայի կապի, սովորողների ինքնուրույնության և ակտիվության զարգացման սկզբունքները: Սրանք նպաստում են նյութի հեշտ ընկալմանն ու յուրացմանը և ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Ընմարանում գործածվում են՝ միջնակարգի բաժնում Հարություն Քյուրբջյանի «Հայրենի աղբյուր», իսկ երկրորդականում՝ Մուշեղ Իշխանի «Արդի հայ գրականությունը» դասագրքերը:

Եվ Հ. Քյուրբջյանի և Մուշեղ Իշխանի դասագրքերում գետեղված են ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ գրողների ստեղծագործություններ: Սակայն տեղի մանկավարժների կողմից կան որոշակի վերապահություններ այս դասագրքերի նկատմամբ, ուստի նախատեսվում է գաղութի կարող ուժերի՝ ուսուցիչների և գիտնական-մանկավարժների միասնական ջանքերով սւ:եղծել նոր դասագրքեր:

Սիրիահայ մանկավարժները միանգամայն իրավացիորեն դեն են, որ Սիրիայի հայկական դպրոցների համար դասագիրք գրեն Հայաստանի, նույնիսկ ուրիշ գաղութների մտավորական-մանկավարժները, քանի որ, ըստ նրանց, հեղինակը դասագիրքը գրելիս անպայման պետք է հաշվի առնի սիրահայ երեխայի հոգեբանությունը, մտածողությունը, հետաքրքրությունները: Նա (հեղինակը) շատ մոտիկից պետք է ծանոթ լինի սիրիահայ աշակերտի մտավոր ունակություններին և հոգեկան աշխարհին և այն միջավայրին, որ ապրում ու մեծանում է նա: Իսկ Հայրենիքի մասնագետներից ակնկալվում է մասնագիտական, մեթոդական և հոգեբանամանկավարժական օգնություն: Երկրորդ տարբերակը համահեղինակությունն է: Նախատեսվում է այլընտրանքային դասագրքերի առկայության դեպքում նախ՝ 1-3 տարի փորձարկել դրանք և ապա կատարել վերջնական ընտրություն:

Կրոնի դասագրքերը, բացի 9-րդ և 12-րդ դասարաններից, կազմված են Առաջնորդարանի կողմից: Կրոնի դասերին դասավանդվում է նաև հայոց պատմություն՝ սակայն հատվածաբար, քանի որ 1967 թ.-ից այն արգելված է պետության կողմից:

## **Մեթոդական հարցեր**

Չնայած կատարվող հսկայական աշխատանքներին, այնուամենայնիվ ընմարանում ամենամեծ խնդիրներից է մնում ուսուցիչների ոչ բավարար մեթոդական զինվածությունը: Իհարկե, սա ունի իր հիմնարար պատճառները:

**Առաջին.** Սիրիայում երկար տարիներ չի եղել ուսուցչական կադրեր պատրաստող հայագիտական հաստատություն, ինչպես կա Բեյրութում՝ Հայագիտական Բարձրագույն հիմնարկը՝ բանասիրության և պատմության բաժիններով:

Միայն վերջերս է Հալեպում սկսել գործել Համագգայինի Սիրիայի մասնաճյուղի Հայագիտական կենտրոնը, որը փորձում է լրացնել եղած բացը:

**Երկրորդ՝** չեն գործում ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Հայաստանն էլ վերջին 10 տարիներին ըստ էության անուշադրության է մատնել սփյուռքի մանկավարժների վերապատրաստման գործը, որը խիստ կարևոր է ոչ միայն հայկական գաղթօջախների ուսուցիչներին օգնելու, նրանց մասնագիտական ու մանկավարժական պատրաստությունը բարձրացնելու, այլև հայրենիք-սփյուռք կապի ամրապնդման, երկուստեք փորձի փոխանակման և այլ առումներով:

Ընմարանի գրեթե բոլոր դասարաններում անցկացրած բազմաթիվ դասալսումներից ակնհայտ դարձան մեթոդական հետևյալ թերությունները.

1. Զգիտես ինչու ուսուցիչների գրեթե մեծամասնության մոտ դասը սկսվում էր նոր նյութի հաղորդմամբ: Միևնչդեռ մտքի տրամաբանական զարգացման ընթացքը և ներառարկայական կապի դիդակտիկական սկզբունքը պահանջում են դասը սկսել հիմն նյութի հարցմամբ, կրկնությամբ ու ամրակայմամբ, որից հետո, հենվելով հին վրա, կատարել նոր նյութի հաղորդում: Դասի վերջում հարցերի և վարժությունների միջոցով կատարել նյութի ամրակայում:

2. Որոշ դասերի ուսուցիչներն ավելի շատ են խոսում, քան աշակերտները: Անընդհատ լավում է ուսուցչի ձայնը: Միևնչդեռ պետք է լիներ հակառակը, այսինքն՝ աշակերտների ակտիվությունը խթանելու նպատակով նրանց խոսեցնել, իսկ դա հնարավորություն կտա աշխուժացնել, ընդգրկել ամբողջ դասարանը, զարգացնել նրանց մտածողությունը, ինքնուրույն գործելակերպը:

3. Դասի ժամանակ չպետք է միշտ հարցնել ձեռք բարձրացնող, պատասխանել ցանկացող աշակերտներին: Պետք է ակտիվացնել նաև ոչ համարձակներին, ամաչկոտներին, քանի որ շատ դեպքերում նրանց պասիվության պատճառը չիմացությունը չէ, այլ խտոնվածքն ու բնավորության գծերը: Հետևաբար կամաց-կամաց նրանց մեջ պետք է սերմանել համարձակություն, սեփական ուժերի նկատմամբ վստահություն: Այս ամենի նախաձեռնողը պետք է լինի դիտողունակ, փորձառու և հոգեբան ուսուցիչը: Նա աչքաթող չպետք է անի նաև թույլերին, ծույլ ու անկարգ աշակերտներին: Ընդհակառակը, նա նրանց պետք է պահի ուշադրության կենտրոնում, հաճախակի հարցումներով անընդհատ ներգրավի դասին:

4. Պատասխանի ժամանակ չի կարելի շտապեցնել աշակերտին, քանի որ, ինչպես իրավացիորեն նշում է 19-րդ դարի հոգեբան-մանակվարժ Ա. Բահաթյանը, «ուսուցիչը միշտ պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ գոյություն ունեն դանդաղ մտածող, բանավոր խոսքը դժվարությամբ կառուցող երեխաներ»<sup>6</sup>: Հետևաբար, հապաղելը, դանդաղելը չպետք է դիտել որպես նյութի չիմացում: Մեկը կարող է դանդաղ մտածելով ճիշտ ու հիմնավոր, խելացի պատասխան տալ, իսկ մյուսը՝ հապճեպ, մակերեսային ու սխալ: Ուրեմն, հետևություն. ուսուցիչը պետք է լավ ճանաչի յուրաքանչյուր աշակերտի անհատական և հոգեբանական առանձնահատկությունները և, ըստ այդմ էլ, դրսևորի նրա հանդեպ անհատական մոտեցում:

5. Ամբողջ դասարանը դասին մասնակից դարձնելու, նրանց պատրաստվածության աստիճանը որոշելու, դասի նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու, ճիշտն ու սխալը տարբերակելու, ստեղծագործական-տրամաբանական մտածողությունը զարգացնելու նպատակով նախընտրելի է պատասխանող աշակերտի սխալը ուղղել նախ աշակերտների միջոցով: Սակայն, ինչպես գրում է Ա. Բահաթյանը, «երկու աշակերտի սխալ պատասխանի դեպքում արդեն, անհրաժեշտ է ուսուցչի ուղղումը, որպեսզի հետագա անհաջող պատասխանը ճշտիչ ներգործություն չունենա աշակերտների վրա»<sup>7</sup>:

Ցանկալի է և արդյունավետ, եթե պատասխանող աշակերտին հարցեր ուղղեն դասընկերները, քանի որ հարց տալ նշանակում է նախ՝ նյութի իմացություն, հարց կազմելու, այն իմաստային և լեզվական առումներով ճիշտ կառուցելու ունակություն, համարձակություն, ինքնուրույնության դրսևորում, ազատ ու անկաշկանդ մտածելու կարողություն: Անհրաժեշտ է խելացի ու ճիշտ հարցեր տվող աշակերտներին խրախուսել ու գնահատել:

6. Դասերի ժամանակ քիչ է ուշադրություն դարձվում զարգացողական վարժություններին:

7. Յուրաքանչյուր դաս պետք է ունենա ոչ միայն ուսուցողական, այլ նաև դաստիարակչական ներգործություն: Այստեղ տեղին է նշել գերմանացի տաղանդավոր հոգեբան- մանկավարժ Յոհան Հերբարտի «դաստիարակող ուսուցում, ուսուցանող դաստիարակություն» հայտնի դրույթը: Դասի ժամանակ հաղորդվող գիտելիքների միջո-

<sup>6</sup> Ա. Բահաթյան, Ուղեցույց հայ ուսուցչի, Թիֆլիս, 1882, էջ 20:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 34:

ցով երեխաների մեջ պետք է սերմանել մարդկային, բարոյական, հայրենասիրական արժեքներ, որոնք խորապես կնպաստեն նրանց զարգացմանը, լիարժեք դաստիարակությանը և առողջ հոգեբանության ձևավորմանը:

### **Դաստիարակության հարցեր**

Քարեն Եփփե ազգային ճեմարանը կրթական հարցերին զուգահեռ մեծ ուշադրություն է դարձնում սովորող հայ երեխաների համակողմանի ու ներդաշնակ զարգացման ու դաստիարակության խնդիրներին, որոնք իրականացվում են ինչպես արտադասարանական, այնպես էլ արտադպրոցական բազմաբնույթ միջոցառումների ու ձեռնարկների ընթացքում:

Ճեմարանի հատկապես երկրորդական բաժնում լուրջ աշխատաքներ են տարվում զարկ տալու արվեստի տարբեր ճյուղերին՝ գծագրություն, երաժշտություն և թատրոն:

Մեծ խանդավառությամբ ու բարձր կազմակերպվածությամբ ճեմարանում նըշվում են եկեղեցական և ազգային բոլոր տոները:

Ատենամարզանքի անվան տակ ճեմարանի բոլոր դասարաններում դասախոսություններ են տրվում պատմական, ընկերային, բժշկական և այլ թեմաների շուրջ: Հանդիպումներ են կազմակերպվում սփյուռքի և հայրենիքի նշանավոր մտավորականների հետ: Ճեմարանն ակտիվորեն մասնակցում է միջդպրոցական մրցումների՝ առարկայական, սպորտային, մշակութային և այլն: Դրանք կազմակերպվում են ինչպես պետական կրթական մարմինների, այնպես էլ Առաջնորդարանի ուսումնական խորհրդի կողմից: Մրցումների արդյունքներում ճեմարանն առաջատարների շարքում է:

1961 թ.-ից ճեմարանում լույս է տեսնում «Ծիլեր» աշակերտական թերթը, որը սովորողներին հնարավորություն է ընձեռում ինքնաճանաչման, ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու ունակությունները ստուգելու, ճեմարանի առօրյան, ճեմարանական կյանքը վերլուծելու, արժեքավորելու, քննադատաբար մոտենալու ու իրենց իղձերն ու ցանկություններն արտահայտելու համար:

«Ծիլեր» -ում իրենց ստեղծագործական առաջին փորձերն են անում ապագա գիտնականը, բանաստեղծը, լեզվաբանը, գրականագետն ու պատմաբանը, նկարիչն ու ձևավորողը:

Տնօրինությանն ու ուսուցչական կազմին ուղղված աշակերտների բազմաթիվ սուր ու քննադատական խոսքերը հանդես են գալիս որպես զգաստացնող ու կրթադաստիարակչական գործընթացը բարեփոխող ազդակ:

1947 թ.-ից առայսօր ճեմարանում գործում է «Երջանավարտից միությունը», որը 1999 թ.-ից լույս է ընծայում «Ծավիղ» պարբերաթերթը:

«Երջանավարտից միությունը» իր բազմաբնույթ գործերով ու ձեռնարկներով նյութական և բարոյական աջակցություն է ցույց տալիս ճեմարանի կրթադաստիարակչական գործունեությանը:

Քարեն Եփփե ազգային ճեմարանը սփյուռքահայ իրականության մեջ ունեցել է և շարունակում է ունենալ բախտորոշ ու վավերական ներկայություն ու մեծ դեր ազգապահպանման գործում:

1997 թ. հուլիսին ճեմարանի հիսնամյակի շքեղ արարողության ժամանակ Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Առաջին Կաթողիկոսն իր արտասանած ճառում ասում է. «Քարեն Եփփե ճեմարանը տիրական ներկայութիւն դարձավ Սուրիոյ հայութեան կեանքէն ներս եւ իր կարեւոր դերը ունեցաւ հայ գաղութի կազմաւորման ու կազմակերպչական աշխատանքներուն մէջ: Արդ, կարելի չէ հասկնալ վերջին կէս դարու պատմութիւնը Միջին Արեւելքի հայութեան՝ առանց Քարեն Եփփե ճեմարանին: Կարելի չէ հասկնալ նույնիսկ ժամանակակից պատմութիւնը Հալէպ քաղաքին՝ առանց ազգային այս կրթական հաստատութեան, որ իր արժանի տեղը եւ իւրայատուկ դերը ունեցաւ Հալէպի կրթական ու մշակութային կեանքէն ներս: Հայ դպրոցը հայ դպրոց կոչուող ո՛չ իր շէնքով եւ ո՛չ ալ իր կրթական ծրագրով, այլ՝ այն հաւատքով ու իտելալներով, զորս կը փոխանցէ նոր սերունդներուն: Ազգային Քարեն Եփփե ճեմարանը ոգի ներար-

կող, հաւատք ջամբող, տեսիլք փոխանցող սրբազան վայր մը դարձաւ՝ գիտութիւն բաշխող հաստատութիւն մը ըլլալէ առաջ ու վեր: Եւ հո՛ս կը կայանայ Քարէն Եփփէ ճեմարանին ինքնուրոյն նկարագիրն ու եզակի առաքելութիւնը»<sup>8</sup>:

Ճեմարանի հազարավոր շրջանավարտներ այսօր գրեթէ ամենուր սփռուող մեջ հանրային, կրթական և մշակութային և այլ բնագավառներում իրենց ներդրումն են բերում հայապահպանութեան գործին: Ճեմարանը սփռուողին տվել է բազմաճառար ուսուցիչներ, նշանավոր ազգային գործիչներ և հրապարակագիրներ:

Խիստ հատկանշական են հնչում Սուրիոյ Բերիոյ Թեմի Առաջնորդ Սուրեն Արք. Գաթարոյանի հետևյալ խոսքերը. «Ազգային Քարէն Եփփէ ճեմարանը ուսման եւ կրթութեան զուգահեռ, աներկբայօրէն նկարագրի կերտման եւ գաղափարապաշտ սերունդի մը դաստիարակութեան վսեմ ձուլարանը եղաւ, որուն լուսեղեն յարկին ներքեւ սերունդներ բացուեցան գիտութեան լոյսին եւ հայաբոյր դաստիարակութեամբ դարձան նուիրեալ մշակները հայ կեանքին »<sup>9</sup>:

Կարծում ենք, որ Հալեպի Քարէն Եփփէ ճեմարանի ծավալած կրթամշակութային գործունեութեան մասին կարելի է շատ խոսել, սակայն մեկ հողվածի շրջանակներում հնարավոր չէ ներկայացնել ճեմարանի այն մեծ վավերական դերն ու նշանակությունը, որ նա իր գոյութեան 54 տարիների ընթացքում ունեցել է Սիրիայի հայկական գաղութի զարգացման և հայապահպանութեան վսեմ գործում:

**Н. К. АРУТЮНЯН - Училище Карен Эппе в Алеппо.** - История армянского народа была бы неполной без истории диаспоры, а в ней, как известно, есть еще немало пробелов. И если жизнь армянских колоний в какой-то степени изучена, то образовательная система, ее очаги все еще ждут своего исследователя. Цель настоящей статьи - дать детальное представление и по заслугам оценить роль училища Карен Эппе в истории армян Сирии, в сохранении их национального самосознания и самобытности. Училище существует с 1947 года, входит в государственную систему просвещения и имеет две образовательные ступени: среднюю (7-9 классы) и вторичную (10-12 классы). Вторичная ступень, или бакалавратура, в свою очередь, имеет два направления - научное и литературное.

Преподавание для учащихся всех классов ведется на арабском языке. Из арменоведческих дисциплин допущены к преподаванию религия (2 часа в неделю) и армянский - как язык богослужения (4 часа в неделю). На уроках религии в какой-то степени освещаются вопросы армянской истории, географии, книжности. В училище Карен Эппе большое внимание уделяется, кроме самого обучения, также и вопросам всестороннего развития армянского юношества, для чего проводятся разнообразные внеклассные и внешкольные мероприятия.

Национальное училище Карен Эппе играло и продолжает играть очень значительную, действенную роль в деле национального самосохранения зарубежных армян.

<sup>8</sup> Յակոբ Զուլաքեան, նշվ. աշխ., էջ 9-10:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 11: